ՀՏԴ 947.925 + 008(479.25)

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ (XIX դար – XX դարասկիզբ)*

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

https://doi.org/10.52853/01350536-2021.3-149

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Արևելյան Հայաստան, օդա, հազարաչեն, գետնափոր տուն, հատակագիծ:

Նախաբան

Բնակարանը կենսապահովման մշակույթի էթնիկ առանձնահատկությունները կրող ակնառու համալիրներից է: Անկախ պատմաաշխարհագրական, բնաէկոլոգիական և տնտեսավարման գերակայությամբ պայմանավորված գործոններից՝ հայ բնակչությանը շրջապատող ռազմատենչ այլէթնիկ թշնամական տարրերից սպառնացող վտանգն ամենուրեք հայ մարդուն հարկադրել է հիմնել կյանքի և գույքի անվտանգության համար հնարավորինս համախմբված, ներփակ, բազմաբաժին բնակարանային համալիր: Ժամանակին և հուսալի ինքնապաշտպանության կազմակերպմանը մշտապես պատրաստ լինելու մղումով էր պայմանավորված ոչ միայն գերդաստանական տներով կենցաղավարելու, այլև ազգատոհմերով համատեղ բնակավայր կամ թաղ կազմած ապրելու դարավոր սովորույթը: Ավանդական այդ կենսակերպը պայմանավորված էր նաև բնաէկոլոգիական ու աշխարհագրական բարդ պայմաններով, տնտեսության վարման կոլեկտիվ ջանքերով, ազգատոհմային սերտ կապերից բխող փոխադարձ օգնության հանգամանքներով: Բացառություն էին Սասունը և Պոնտական Հայաստանը, որոնց բնորոշ էր տների ցրվածությունը՝ պայմանավորված լեռնային անմատչելի կտրտված տեղանքով, տնամերձ հողերի վրա տուն կառուցելու, անտառահատական հողագործությամբ զբաղվելու, պարարտացման գործի դյուրացումն ապահովելու, չինանյութի, բերքի ու անասնակերի փոխադրման բացառիկ դժվարություններից զերծ մնալու, երկրի բնական պաշտպանվածությունից օգտվելու հանգամանքով և ինքնապաշտպանությանը մշտապես վարժված լինելու բնակչության բնազդով: Լեռնային կտրտված այս տեղանքներում բերքի, անասնակերի և կենցաղային այլ փոխադրումների զրեթե անհնարինության պատճառով գյուղական բնակավայրերն ունենում էին նաև ռազմական հենակետ-ամրոցների վերածված տնտեսական ու արտադրական նշանակության մզրաներ՝ գոմ, ախոռ, փարախ, կալատուն, կալ, մարագ և այլն:

* *Ներկայացվել է 09. VI. 2021 թ., գրախոսվել է 21. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 28. VII. 2021 թ.:*

Ուստի սասունցիների և պոնտահայերի լեռնային գյուղերի ցրված լինելը ինքնապաշտպանությանը չէր խանգարում:

XIX դար – XX դարասկզբին Հայաստանում գյուղական բնակարանի գերակշռող տիպը գլխատունն էր[1], որը բնորոշ էր գրեթե բոլոր պատմաազգագրական շրջաններին: Այն կրել է տարբեր անվանումներ՝ գլխատուն (Տավուշ, Լոռի), հացատուն (Արարատյան հովիտ, Աշտարակ), հացատօն (Այունիք), ղարադամ (Արցախ), հացատուն, քուրսա տուն (Նոր Բայազետ), ջոջ տուն (Մարտունու շրջան, Վան), սողոմաքաշ տուն, տան տուն (Վասպուրական), տուն, հացարան, թինդրատուն, թոնդրատուն (Կարին, Ախալքալաք, Ախալցխա, Շիրակ), թոնրատուն (Ակն, Խարբերդ, Մուշ, Տիգրանակերտ), թոյնի տուն, կենապատուն (Արաբկիր), թոնրուք (Խարբերդ), թորվանատուն (Մոկս), կրակատուն (Դերսիմ), մեծ տուն, կրակատուն (Աղձնիք), խորընդուն (Սասուն), հազարաչեն տուն (Ասպարան, Մուշ, Հարք, Ալաշկերտ), կտրաւոր տուն, օրթօջախ տուն (Իջևան) և այլն: Այս բոլոր անվանումներն ունեն իմաստային ընդհանրություն՝ տուն, բնակարան, օթևան, ընտանիք, ազգատոհմ:

Հայկական ավանդական բնակարանի առանձնահատկությունների շուրջ

Առանձնահատկությունները ճիշտ դիտարկելու համար շատ կարևոր է հաշվի առնել բնակարանն իր պատմական զարգացման մեջ: Հայկական բնակարանի վերաբերյալ ամենանախնական գրավոր տեղեկությունը պատկանում է հույն պատմիչ և զորավար Քսենոփոնին (401 թ. Ք. ա.): Պարսկաստանից դեպի Սև ծով Հայաստանի վրայով նահանջի ճանապարհին ընկած հայկական գյուղական տների մասին նա գրում է. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքն ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր (հողի մեջ), մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը»[2]: Հետագայի շատ ճանապարհորդներ, նկարագրելով Հայաստանի տները, հիշատակել են Քսենոփոնին[3]: Այդուհանդերձ, ավելորդ չենք համարում ամբողջությամբ մեջբերել նրանցից մեկի՝ անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերի նկարագրությունը, որը XIX դ. սկզբներին անցել է Հայաստանով. «Մենք հասանք եքրեք [Ekrek] *մի հայ գյուղ (Ագարակ գյուղն էր Տիկոր գետի եզերքին՝ Թալինի շրջանում, որն 1931 թ. ուներ 411 բնակիչ – Ռ. Ն.), որի տները նման են Հայաստանում Քսենոփոնի նկարագրա-*

---

[1] *Մ. Տեր-Մովսիսյան. 1894, Խ. Աբովյան. 1961, էջ 59–96, Վ. Բդոյան. 1974, էջ 73–84, Ստ. Լիսիցյան. 1969, էջ 96–114, Խ. Սամուելյան. 1941, հ. II, էջ 199–216, Ս. Վարդանյան. 1959, էջ 43–70, Ռ. Նահապետյան. 2021, № 1, էջ 25–40, Ռ. Նահապետյան. 2020, թիվ 2, էջ 96–108, Ռ. Նահապետյան. 2020, գիրք 3, էջ 122–137,* С. Лисициан. 1925, с. 97–108; С. Лисициан. 1927, с. 119–133; С. Лисициан. 1955, с. 182–264; Ю. И. Мкртумян. 1983, с. 150–188; А. Марутян. 1989, с. 63–142; А. Марутян. 1990, с. 19–33; А. Марутян. 2012, с. 205–232 *և այլն:*

[2] *Քսենոփոն. 1970, էջ 97:*

[3] *Ռ. Նահապետյան. 2020, գիրք 3, էջ 138–161:*

ծին, և կարելի է նկատել, թե նույնանման տներ ունեն Հայաստանի ամբողջ տարածքում, ներառյալ Վրաստանի մի մասը, որ նշանավոր է իր ցրտի խստությամբ: Բնակիչները կատարում են բավականին ընդարձակ հողային աշխատանք՝ գետնի բնույթին համաձայն փորում են իրենց տան մեկ, երկու կամ երեք կողքերը, և հետո մնացյալը կառուցում են կիկլոպյան պարիսպների նման վիթխարի քարերով: Սրանց վրա դնում են շատ հաստ գերաններ, և ապա ամբողջությունը ծածկում են հողի հաստ շերտով, այնքան հաստատուն կերպով, որ երբ մանենք գալիս գյուղում, դժվար է ասել, թե դուք քայլում եք մի տան կտուրի, թե մի պարզ գետնի վրա: Նրանք միայն մի անցք են թողնում ծածկի կատարին (երդիկ – Ռ. Ն.), որ լուսավորում է ընտանիքի բնակած սենյակը: Այս սենյակը բաժանված է հաստ տախտակներով ու ճաղերով ներքնամասի մեծ մասից, որ ծառայում է որպես ախոռ կենդանիների համար: Մի կարգ պարագաներում բնակիչներն ու կենդանիները հասարակաց մի մուտք ունեն, ինչպես բնակության համար ընդհանուր մի վայր: Բնակիչներն ու կենդանիները իրար տաք են պահում, առաջինները կրակ վառելով (թոնրի կրակով – Ռ. Ն.) իրենց հարկաբաժնում և վերջինները իրենց չնչառության տաքությամբ»[4]*:*

1930-ական թվականների կեսերին Գյումրի (Լենինական) քաղաքի մսի կոմբինատի կառուցման վայրում հայտնաբերվեցին հնավանդ բնակատեղիի մնացորդներ, որոնք, ըստ հնագիտական իրեղեն տվյալների, թվագրվում են բրոնզե դարով. այդ բնակարանները եղել են կիսագետնափոր, անմշակ քարերից չարված պատերով, փայտե սյուների քարե պարզունակ պատվանդաններով, ծածկը՝ փայտե գերաններով, ինչպես հայ գյուղական տան հետագա կառույցները[5]*:*

Եթե վերը բերված նկարագրությունները դիտենք որպես գլխատան նախնական օրինակներ, ապա մինչև XIX դարավերջը կարելի է մատնանշել գլխատան հետագա զարգացման երկու ուղղություն: Առաջինը տան զարգացումն է ուղղահայաց գծով. գլխատունն աստիճանաբար դուրս է եկել գետնի երես, և XIX դարավերջին ու XX դարասկզբին գերիշխող են եղել կիսագետնափոր և վերգետնյա տները: Գետնի մակերևույթի նկատմամբ ունեցած հարաբերությամբ գլխատունը կարելի է բաժանել երեք տեսակի՝ գետնափոր, կիսագետնափոր ու վերգետնյա, որոնց առկայությունը պայմանավորված էր առաջին հերթին բնակլիմայական և աշխարհագրական գործոններով: Գերիշխող տեսակը կիսագետնափոր տներն էին. անխուսափելի մի երևույթ, քանզի հայկական բնակավայրերը հիմնականում տեղադրված էին լեռնային տեղանքներում՝ պայմանավորված ինքնապաշտպանության կազմակերպման ու մշակելի հողատարածությունների խնայողության և այլ դրդապատճառներով: Ուստի նման բնակարանային համալիր կառուցելու համար անհրաժեշտ էր փորել ու հավասարեցնել լանջային տեղանքը: Վերգետնյա տները կառուցվում էին հիմնականում հարթ ռելիեֆ ունեցող շրջաններում:

[4] *Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն. 1934, հ. Զ, էջ 253–254:*
[5] *Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն. 1941, հ. II, էջ 191–192:*

Գետնափոր տների շարքին, որ կիրառական էին ավելի երկար ժամանակ, պայմանականորեն կարելի է դասել Տավուշի տարածաշրջանի XIX դարի բնակարանը, որի առջևի մասը բաց էր: Բանասացների վկայությամբ՝ այստեղ տները թաղված էին հողի մեջ՝ հաճախ քարե պատեր անգամ չունենալով. հողի շերտը պահվել է ամուր և հաստ տախտակների հերմետիկ միակցմամբ, ու, փաստորեն, բնակարանի ամբողջ շինանյութը փայտն էր: Այս հանգամանքը կարելի է բացատրել շինաքարի բացակայությամբ կամ էլ բնակավայրից հեռու ընկած լինելով, տեղափոխման դժվարություններով: Հակառակ դրան՝ տարածաշրջանը հարուստ էր անտառափայտով: Բացի այդ, գետնափոր լինելու անհարմարությունն այնքան էլ սուր չի զգացվել համեմատաբար սակավ տեղումների, տաք ձմռան, հով ամռան պատճառով[6]:

Հայկական ավանդական ժողովրդական բնակարանի զարգացման երկրորդ ուղղությունը հազարամյակների ընթացքում մեկ բաժնով տան՝ բնակելի ու տնտեսական-արտադրական գործառույթներին համապատասխան հորիզոնական ծավալումն է՝ առանձին կառույցների ավելացմամբ, բազմաբաժին համալիրի վերածմամբ. երևույթ, որ պայմանավորված էր հետագա ժամանակներում տնտեսական-արտադրական և մշակութային կյանքի առաջընթացով:

Որպես տնային տնտեսության ամենակարևոր բաժանմունքներից մեկը՝ գլխատունը պատմական Հայաստանի տարածքում զանազան հորինվածքներով ու ճարտարապետական տարբեր չափեր ունեցող հարկաբաժին էր: Դրա չափերը պայմանավորված էին ընտանիքների կազմով և կառուցվածքով, տնտեսավարման եղանակներով ու ծավալներով: Մեծ մակերեսով գլխատները հատուկ ու անհրաժեշտ էին մեծ կազմ ունեցող գերդաստաններին, որոնցում կային առնվազն 5–7 և ավելի նորածիններ: Բանահավաք Վ. Պետոյանի հավաստմամբ, Սասունում այդպիսի ընտանիքներում «7–10 օրորոց էր օրորվում»[7], իսկ մեր գրառած նյութերում նույն վայրում գերդաստանական շատ ընտանիքներ XX դարի սկզբներին կազմված էին 50–60 անձից[8]: Գերդաստանական տների բնական պահանջներով և հնագույն ավանդներով էր պայմանավորված բնակելի և տնտեսական շենքերի կառուցապատումը: Գերդաստանների գոյատևումը բնականորեն հուշում էր մեծ տանը ներհատուկ բազմաբաժին շենքերի ստեղծումը: Տուն հիմնող նահապետն ուներ հետևյալ նկատառումները. ա) փոքր ընտանիքի հետագա աճն ու գերդաստանի վերածվելը, բ) նախապես մեծ ընտանիքին համապատասխան շենքային համալիր ստեղծելը, գ) ապագայում այդ ընտանիքի առանձնանալը, հետևապես կառուցվող տունը նախօրոք առանձին մասերի բաժանելու և դուստր ընտանիքներին հատկացնելու հեռանկարը: Ահա այսպես էլ ձևավորվում էր ամեն մի գերդաստանական շենքի համալիրը: Նման կառույցների հսկայական չափերով էին պայմանավորված ծածկաձևերն ու հատակագծերը, թեև հաճախ էլ պահանջվում էին ծածկի միևնույն տեսակները:

XIX դ. երկրորդ կեսին և XX դարասկզբին գլխատունը ներկայացված է երկու հիմնական տիպերով, որոնց առանձնացման հիմքում ընկած են ներքին

[6] Կ. Օհանյան. 1977, էջ 266–269:
[7] Վ. Պետոյան. 1965, էջ 221:
[8] Ռ. Նահապետյան. 2004, էջ 61–72:

պլանավորման յուրահատկություններն ու ծածկերի ձևերը: Առաջին տիպը բնորոշ էր Հայաստանի նախալեռնային, անտառաչատ շրջաններին՝ Լոռի, Տավուշ, Արցախ, Սյունիք, Վանա լճի արևելյան ու հարավային ափամերձ շրջաններ, Մշո դաշտ, որտեղ կլիման չափավոր է, և չկա ջերմաստիճանի կտրուկ տատանում: Այս տիպի տարբերակիչ առանձնահատկությունը բնակելի և տնտեսական-արտադրական շինությունների առանձնացվածությունն է: Գլխատան այս տիպը հիմնականում բաղկացած էր սրահից (երեսբաց, էյվան), գլխատնից (կենալատուն, ղարաղամ), հացատնից, մառանից, գոմից, երբեմն էլ՝ սենյակ կամ օթախ անվանումով բաժնից:

Երկրորդ տիպի գլխատան համալիրը կազմում էին բակը (չվաք), գլխատունը (տան տուն, տուն), մառանը (քոխ, քիլար), գոմը (թավլա), գոմին կից սենյակը (գոմի օդան), երբեմն էլ քաղաքային տիպի հյուրասենյակը-օթախը: Այս համալիրի կարևորագույն առանձնահատկությունը բնակելի և տնտեսական շինությունների համախմբումն է մի ծածկի տակ: Գլխատան բնակելի համալիրի երկրորդ տիպը տարածված էր ջերմաստիճանի կտրուկ տատանումներ ունեցող, ցրտաշունչ սարահարթային և դրեթե անտառազուրկ շրջաններում՝ Բարձր Հայք, Տուրուբերան, Ծոփք, Աղձնիք, Ջավախք, Շիրակ, Արագածոտն, Գեղարքունիք: Այս համալիրում գլխատունը բաժանված էր երկու մասի. փոքր, վերին կիսակլոր (աբսիդ հիշեցնող) մասը ներքևի մասից բարձր էր 40–50 սմ՝ երկու քարե աստիճանով, դրա մակերեսը հողաքարե թմբիկ էր, որտեղ կար մեկ մեծ թոնիր կամ որոշ դեպքերում՝ մեծ ու փոքր թոնիրներ, իսկ ներքևի մասից անջատվում էր երկու սյան մեծ կամարով և հացի ու ընդեղենի չարժական փեթակ-ամբարներով: Այն կանանց հարկաբաժինն էր: Ընդ որում, թմբիկավոր մասը, որը մեծ մասամբ աբսիդավոր էր լինում, կոչվում էր վերին տուն կամ թնդրօջախ, իսկ ստորին քառակուսի կամ քառանկյունի մասը՝ ցածի տուն կամ մեծ տուն, քանզի այն գլխատան առավել մեծ մասն էր, որտեղ էլ կենտրոնացած էր ամբողջ գերդաստանի գործունեությունը: Այստեղ կարող էր տեղադրվել կենցաղային կարիքների և ջեռուցման համար փոքր թոնիր կամ բաց օջախ-կրակարան՝ հանգույթ: Օտար էթնիկ տարրի առկայությունը հարկադրել է հայ բնակչությանը հեռու պահել կանանց նրանց հետ հնարավոր շփումներից, ուստի գլխատան մի մասը՝ իր երկու մառաններով, ջահել կանանց համար առանձնարան էր ծառայում:

Սակավ տարածված երրորդ տիպի հացատունն Արարատյան հովտում ուներ երկու թմբիկ՝ մեկի վրա 1–2 թոնիրներով կամ յուրաքանչյուրի վրա մեկական՝ հողաքարե բազմոցի կամ թախտ-մահճակալի նշանակությամբ: Ըստ գլխատուն-թորվան տան մեկ այլ հատակագծի՝ Մոկսում հայոց տան համակառույցի երկրորդ հարկի հարթ հատակի կենտրոնում առկա էր «կախովի» թոնիր, փայտե քառակուսի կմախքի մեջ՝ ներսից և դրսից կավե շաղախով երեսպատված: Դրանք կավե հաստ շուրթերով թոնիրներ էին[9]: Այստեղ, բացի թոնիրներից, գոյություն ուներ նաև բաց կրակարան-օջախ՝ հանգույթ: Այն թրծած կավե կամ սալե պատերով ու ծածկով կրակարան էր, որը Սասունում կոչվում էր թվեք[10]:

[9] И. А. Орбели. 2002, с. 11; *Ռ. Նահապետյան. 2019, գիրք 2, էջ 328:*
[10] *Ե. Կարապետյան. 1962, էջ 55:*

Մանուածքային դրականության մեջ անցյալ դարի վերջին տասնամյակներին քննարկման առարկա էր դարձել Անդրկովկասի ժողովուրդների բնակարանային համալիրների, այդ թվում նաև գլխատների համանմանության հարցը: Ուշադրության է արժանի Տ. Ա. Ջիկովանու՝ Անդրկովկասի ժողովուրդների բնակարանների դասակարգումը: Նա առանձնացնում է աստիճանավոր գմբեթաձև ծածկով բնակարանների չորս տեսակ. «1) միատարր կամ մեկ բաժնով տուն՝ ղարաղամ՝ բնորոշ Լեռնային Ղարաբաղի հայերին, 2) երկտարր հատվածավորված տուն, որում միավորված էին բնակելի մասը, գոմը և սրահը՝ տարածված ղարաբաղյան ադրբեջանցիների, քրդերի մեջ, 3) պարզ համալիր-տուն, որտեղ մեկ տանիքի տակ միավորված են բնակելի մասը, մառանը, փուռը, սրահը, երբեմն նաև գոմը, որոնց մուտքերը բացվում էին սրահից՝ բնորոշ Ներքին և Ստորին Քարթլիի, Ղազախի, Լոռու համար, 4) փակ համալիր՝ կազմված բնակելի մասից, փուռից, մառանից, գոմից, մարագից և սրահից՝ այստեղից գլխատուն բացվող մուտքով, որտեղից մյուս հարկաբաժինները հաղորդակցվում էին ներսից: Այսպիսինները տարածված էին Վրաստանում (Թրիալեթի, Մեսխեթ-Ջավախեթի, Թաո-Կղարջեթի) և Հայաստանում՝ Բարձր Հայքում, Գեղարքունիքում, Շիրակում, մասամբ Լոռի-Փամբակում և Վանի վիլայեթում»[11]: Ինչպես երևում է, բոլոր չորս տեսակներն էլ տարածված էին նաև հայերի շրջանում: Սակայն այնքան էլ պարզ չէ, թե հեղինակը, միատարր տուն ասելով, ինչ նկատի ուներ. չէ՞ որ Ղարաբաղի հայերի գոմը, փարախը, մարագը, սովորույթի համաձայն, տնից հեռու էր կառուցվում: Ստացվում է, որ մի դեպքում գոմը մտնում է համալիրի մեջ, եթե բնակելի համալիրին կից է, մյուս դեպքում՝ ոչ, եթե առանձին է: Բացի այդ, զուտ հայկական առանձնահատկություն է այն, որ այստեղ կա գոմի ճակատային մասի երեք-քառորդը կազմող օդա՝ կոթողային կառույց, որ հայկական հազարաչեն գլխատան զուգակիցն է, քանզի այն, բացի բնակարանի մի հատվածը լինելուց, նաև հասարակական արժեք է ու գլխատան նման բազմագործառույթ նշանակություն ունի. երևույթներ, որոնք զուրս են մնացել վրացի գիտնականի ուշադրությունից:

Ուստի նպատակահարմար է դասակարգումը կատարել ոչ այնքան հաշվի առնելով համալիրի բաղկացուցիչ մասերի քանակը, որքան դրանց փոխադարձ գործառութային նշանակությունը և դասավորության բնույթը: Այսպես, ժողովրդական բնակարանի «գլխատուն» տիպը Հայկական բարձրավանդակում լինելով համընդհանուր՝ պայմանավորված աշխարհագրական, բնակլիմայական և տնտեսամշակութային գործոններով, առանձին պատմաազգագրական մարզերում ունեցել է յուրահատուկ տարբերակներ[12]: Գլխատունն առհասարակ նստակյաց, երկրագործա-այգեգործա-անասնապահական տնտեսություն վարող ժողովրդին բնորոշ բնակարանի տիպ է, որպիսին էր հայ ժողովուրդը վաղնջագույն անցյալից: Այս առումով ձեռքի տակ եղած պատմագրական և ազգագրական նյութերը մեզ բերել են այն համոզման, որ պատմական Հայաստանում կարելի է առանձնացնել գլխատուն բնակարանային համակառույցի երեք հիմնական ձև՝ ազատ, բաց և փակ:

---

[11] Т. А. Чиковани. 1971, с. 34–35.

[12] *Դ. Վարդումյան. 2004, № 2, էջ 48–64:*

Ազատ համակառույցում բնակելի և տնտեսական կառույցները սովորաբար միմյանցից մեկուսացված էին: Բնակելի հատվածը բաղկացած էր տնից, նրա առջև եղած սրահից, երբեմն էլ տանը կցակառուցվել է մառանը՝ մուտք ունենալով սրահից կամ անմիջապես տնից: Բոլոր մյուս կառույցները՝ գոմը, թոնրատունը, մարագը և այլն, տեղադրվել են բնակելի տնից անջատ՝ մեկուսի: Այս ձևը բնորոշ էր հիմնականում Ղարաբաղի հայաբնակ Տավուշին, մասամբ՝ Լոռուն ու Զանգեզուրին:

Բաց համակառույցում տունը, մառանը, գոմը, երբեմն նաև ոչխարի փարախը կցակառուցվել են միմյանց, սակայն դրանց մուտքերն առանձին էին և հիմնականում բացվում էին բակից կամ տան առջև գտնվող բաց սրահից: Բնակարանային այս համալիրը բնորոշ էր մասամբ Զանգեզուրին, հատկապես՝ Սիսիանի, Վայոց ձորի մեծ մասին, Այրարատին, Լոռու մի զգալի մասին: Այրարատ պատմաազգագրական շրջանին հատուկ բնակարանը՝ տափակ կտուրով, առանձին խոհանոցով և հնձան-մառանով, շրջափակված բարձր ցանկապատով, ուներ ճարտարապետորեն ձևավորված դարպաս: Այստեղի բնակարանը հարմարեցված էր խաղողագործական-այգեգործական տնտեսությանն ու շոգ կլիմային:

Հորինվածքային լուծումներով փակ համալիրը համապատասխանել է արևմտահայկական ու արևմտահայերով բնակեցված արևելահայկական բնակավայրերին, իսկ ազատ և բաց համալիրները՝ արևելահայկականին: Փակ համալիրի առանձնահատկությունն այն էր, որ գլխատանը կից բոլոր հարկաբաժինները մուտքերով հաղորդակցվել են գլխատան բնակելի մասին, դրսի հետ ունեցել են միայն մեկ ընդհանուր մուտք՝ փակ նախասրահի միջով: Դա միհարկանի գմբեթարդ շինություն էր, միասնական բարդ համակառույցով, որտեղ գրեթե բոլոր օժանդակ տնտեսական և բնակելի շենքերը համախմբված էին մի տանիքի ներքո: Տվյալ համալիրը լավագույնս հարմարեցված էր լեռնային խստագույն պայմաններում երկրագործական-անասնապահական տնտեսություն վարելուն և գերդաստանական տներով բնակությանը: Բնորոշ էր Արևելյան Հայաստանի ցրտաշունչ կլիմայով ազգագավառներին՝ Շիրակին, Ջավախքին, Գեղարքունիքին, Արագածոտնին, մասամբ Այրարատի բարձրադիր շրջաններին և Վայոց ձորին: Քանի որ ձմեռն ավելի երկար էր տևում, մարդիկ ստիպված էին ամեն կողմից շինություններով շրջափակել բնակելի հարկաբաժինը՝ գլխատուն-թոնրատունը: Հատկանշական է, որ բաց համալիր ունեցող Այրարատի բարձրադիր մասում՝ Կոտայքի սարավանդում, համալիրը փակ բնույթի էր: Եվ պատահական չէ, որ հենց այդ համալիրներում է գոմի օդան իր առավելագույն զարգացմանը հասել: Բնակարանային համակառույցի ձևերի առաջացման գործում կարևոր նշանակություն է տրվել ոչ միայն բնակլիմայական պայմաններին հարմարվելուն, այլև վայրկյաններից անվտանգությունն ապահովելուն: Այս համալիրներում արդեն շատ կարևոր տեղ էր գրավում գոմի օդան՝ իբրև գլխատան դուգակիցը: Նշված շրջանների հիմնական բնակիչներն Արևմտյան Հայաստանի Բարձր Հայքից 1830-ական թվականների ներգաղթողներն էին՝ իրենց հետ բերելով տեղական ճարտարապետական հորինվածքային ավանդույթները:

Առաջավոր Ասիայի մյուս երկրներում և այլուր օդան գոմին կցված ձևով հայտնի չէ: Մինչդեռ հայկական իրականության մեջ այդ կառույցը գործել է

դրեթե ամենուրեք: Լեռնական վայրկատուն կյանքով ապրող ցեղերը հարևանությամբ ապրող նստակյաց երկրագործական կյանք վարող հայ ընտանիքի համար իսկական չարիք էին, որոնք ճմռանը հաճախակի հարձակումներ էին գործում հայերի ունեցվածքը կողոպտելու և անասունները խլելու նպատակով: Հետևաբար, յուրաքանչյուր գյուղ և ընտանիք պետք է դիմեր ինքնապաշտպանության: Հայ ընտանիքն ինքնապաշտպանության նպատակով հարկադրաբար ավելի ու ավելի էր համակենտրոնացնում իր ննջարանը: Առավել մեծ ընտանիքները կիսվում էին՝ գիշերելով գլխատանը և գոմի օդայում:

Այս վայրագությունները աննկատ չեն մնացել նաև եվրոպացի ճանապարհորդների տեսադաշտից: Այսպես, օրինակ, անգլիացի դիվանագետ Ու. Աուզլեյը գրում է, որ Հայաստանն այն երկիրն է, «ուր սեփականությունը այնքան անապահով է սեփականատիրոջ համար, որ (գոմի ու գոմի օդայի համատեղումը) մի առավելություն է իր աչքի առաջ ունենալ այն բոլորը, որ կազմում է իր հարստությունը, և սովորությունը վարժեցնում է նրան կենդանիների չնչառության... հետ»[13]: Մի կողմից՝ ջեռուցման ապահովման, մյուս կողմից՝ հրոսակների ավարառությունները կանխելու նպատակով հայ գյուղական բնակչությունն իր ճմեռնատունը կցել է գոմին, դրանով նաև ամբողջ ընտանիքով կամ մշակների միջոցով կանխել է գիշերային ավարառությունները, որով և բացատրվում է գոմի օդանները որպես պահակակետեր օգտագործելը: Մի հանգամանք ևս. այդ նույն նկատառումից ելնելով՝ դարեր շարունակ մշակվել էին կնոջ պատիվը պահելու և ներխուժող ավարառուներին դիմագրավելու ձևեր. դռները ամրացվում էին սողնակներով, տղամարդիկ քնում էին մուտքի կողմում՝ առևանգիչ-թալանչիներին առաջին իսկ պահին դիմագրավելու համար:

Ընդհանրապես, գոմի օդան հայկական բնակարանի ուշագրավ տարրերից է, և, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այն ժամանակի ընթացքում փոփոխվել ու զարգացում է ապրել կառուցվածքային և գործառութային առումներով: Սկզբում ունենալով թմբիկի կամ գոմի մեծ ցանկապատով անջատված թախտի ձև՝ այն եղել է ծառաների ու հովիվների սենյակը, ապա կատարելագործվելով՝ ստացել է ընդարձակ սենյակի տեսք՝ երկկողմանի լայն թախտերով, կամարաձև ծածկով և գեղեցիկ ձևավորված բուխարիով[14]: Օտարի, մասնավորաբար՝ թուրքական տիրապետության ալան-թալանի շրջանում, միջին դարերից ի վեր, գոմին առընթեր, ճակատային մասում հիմնված սենյակը Հայաստանի գավառների մեծ մասում ստացել է օդա անվանումը[15], իսկ Պարսկահայքում, Արարատյան որոշ շրջաններում կոչվել է մկյանա-մկյանա կամ սպքու[16]՝ բազմոց նշանակությամբ: Այստեղ էին կայանում հասարակական նշանակությամբ ժողովները և ընդունվում համայնքին

---

[13] *Հովհ. Հակոբյան. 1934, հ. Զ, էջ 475:*

[14] С. Лисициан. 1925, с. 66.

[15] Օդա *բառը Հր. Աճառյանը բացատրել է որպես «գոմի քով ծառաներու հատուկ ննջասենյակը» (տե՛ս նրա «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և փոխառյալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզվին մեջ համեմատած Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն» հոդվածը.– «Էմինեան ազգագրական ժողովածու», 1902, հ. Գ, էջ 370):*

[16] *Համառոտ բառարան պարսկերեն–հայերեն, 1858, Բ, էջ 874:*

վերաբերող բանավոր որոշումները: Վ. Բդոյանի դիտարկմամբ՝ օդան էլ դխատան նման համապարփակ սենյակ էր: Ամենից առաջ այն անասնախնամ մարդկանց հանգստարանն ու ննջարանն էր: Այն նաև հյուրասենյակ էր. բոլոր ծանոթ ու անծանոթ հյուրերը, քարավաններով անցնող վաճառականները քնում էին օդաներում և անասուններին էլ տեղավորում գոմերում: Տանտերերն իրենց պարտավոր էին համարում կերակրել թե՛ հյուրերին և թե՛ անասուններին: Այս իմաստով օդան ոչ միայն հյուրատուն էր, այլև իջևանատուն[17]: Նաև գրուցարան էր, տղամարդկանց հասակային խմբերի զվարճարան, հակաթուրքական պայքարի քաղաքական գաղտնի ընկերությունների ակումբ, շատ դեպքերում՝ յուրօրինակ արվեստի տուն, որտեղ տեղի էին ունենում ժողովրդական, աշուղական, գուսանական երգերի կատարումներ, հեքիաթասացություններ, պարահանդեսներ, թատերախաղեր, մարզական մրցումներ: Օդայի գոյությունը, ինչ խոսք, պայմանավորված էր ցուրտ վայրերում կենդանիների ջերմությունից օգտվելու հանգամանքով[18], որի այդպիսի կարևոր դերին ու նշանակությանը որոշակիորեն նպաստել է նաև վառելափայտի սակավությունը: Համեմատությունը ցույց է տալիս, որ վառելափայտով հարուստ, մեղմ կլիմա ունեցող և համեմատաբար անվտանգ շրջաններում (Զանգեզուր, Ղարաբաղ, Տավուշ) օդան բացակայել կամ ունեցել է ամենապարզունակ տեսք՝ մնալով, փաստորեն, զարգացման սկզբնական մակարդակի վրա: Բաց համալիրների տարածման բարձրադիր, ցուրտ կլիմայով շրջաններում (Սիսիան, Այրարատ) նույնպես հանդես է գալիս գոմի օդան, սակայն դա կարելի է կապել ոչ այնքան կլիմայի խստության, որքան վառելափայտի պակասության հետ: Ուշագրավ է, որ օդայի տարածման տարածաշրջանը համընկնում է բոլոր այն շրջաններին, որտեղ որպես հիմնական վառելանյութ օգտագործվել է աթարը:

Վառելափայտի առատությամբ պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ Ղարաբաղում, Տավուշում, Լոռիում, մասամբ էլ՝ Զանգեզուրում թոնրատունն առանձնացվում էր բուն տնից: Անտառների առկայությունը հնարավորություն է տվել այդ շրջանների բնակչությանը միաժամանակ կրակ վառել և՛ տանը, և՛ դրսում. մի բան, որ բացառվում էր անտառազուրկ շրջաններում[19]:

Լեռնային անտառազուրկ ցրտաշունչ վայրերում գոմի օդան կամ, ինչպես ընդունված է ասել, ձմեռային բնակարանը, անասունների շնչով ջեռուցվող դխատանը կից հարկաբաժին էր, հազարաչեն դխատան զուգակիցը: Հայկական օդաների բազմազործառույթ լինելու և ներսույթի ճարտարապետական գեղագիտական լուծումների (ներսից հղկված պատեր, բուխարի և սյուների գեղազարդված տեսք, ծածկի ու հատակի յուրօրինակ ձևեր, որմնախտեր, ամֆիթատրոն) շնորհիվ դխատան համալիրը էականորեն տարբերվում էր առաջավորասիականից. վերջինս հայկական օդաների չքեղությունը չի ունեցել: Այստեղ՝ բուխարու աջ և ձախ կողմերի պատերի երկայն-

---

[17] *Վ. Բ դ ո յ ա ն. 1963, հ. 1, էջ 52, Վ. Բ դ ո յ ա ն. 1974, էջ 79–82,* Л. В а р д а н я н. 1981, с. 101, 102, 134–137; А. М а р у т я н. 1989, с. 76–77.

[18] Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях. 1836, т. 4, с. 320, *Լ. Ս ա ր գ ս յ ա ն. 1890, էջ 19–20, 23,* М. Ш а г и н я н. 1926.

[19] А. Л. Я к о б с о н. 1950, с. 59.

քով, հաստատուն փայտե կամ հողաքարե բազմոցներին փոխարինում էին չարժական զույգ թախտերը, որտեղ բազմում էին տարեց տղամարդիկ, պատվավոր հյուրերը:

Քանաքեռի գոմի օղան ճանապարհորդ Աուգուստ Ֆոն Հաքստհաուզենը հիշատակել է սաք[ու] անվանումով[20], իսկ Տավուշի Բերդ գյուղում այն կոչվել է գոմի օթախ: Ի դեպ, օղա են անվանվել նաև թուրքական հասարակական իջևանատները: Այս հարկաբաժինն օղա է հիշատակել Ե. Լալայանը[21], իսկ Ստ. Լիսիցյանն[22] այն անվանել է գոմի օղա, Վ. Բդոյանն առաջարկել է օղա, սպարս-սէքի օտարահունչ եզրույթների փոխարեն անվանել գոմասենյակ[23]:

Գոմի օղան թե՛ գլխատան համալիրում, թե՛ դրանից հեռու ընկած, ինքնուրույն բաժանմունք չէր, այլ գոմի մի անկյունը կամ ճակատը զբաղեցնող ներդիր սենյակ, որը միտված էր ծառայելու իբրև անասուններին խնամողների հանգստարան ու ննջարան, սակայն շատ ազգագավառներում այն բազմագործառույթ էր: Լեռնային ցուրտ շրջաններում այն գերդաստանի համար ծառայում էր նաև ննջարան: Ժամանակի ընթացքում այստեղ ավելանում է մակերեսը, ծխնելուզավոր կրակարան-բուխարին, ներսը ստանում է գեղազարդված, կահավորված տեսք: Բուխարի-օջախի դիմաց, օդայի ամբողջ երկարությամբ մեկ մետր լայնությամբ փոս էին փորում՝ ոտքերը կախելու, կոշիկները տեղավորելու համար: Սրա երկու կողմերը քարե պատերով անջատելով՝ աջ ու ձախ կողմերին մեկական թմբիկ էին ստեղծում: Սրբատաշ քարերից չարված պատերը նստարանի բարձրություն էին ունենում, որոնց վրա մարդիկ նստում էին ավազության կարգով: Երբեմն հողե թմբիկներին փոխարինում էին փայտե անշարժ կամ չարժական թախտերը: Փայտաշատ շրջաններում դրանց փոխարինում էին տախտակե դարավանդաձև, անշարժ ու գեղեցիկ նախշազարդված թախտերը: Նմանատիպ օդաները գոմից անջատվում էին միայն այունաշարով, բազրիքներով և թախտերի ճակատներով ու կողերով՝ գոմից տաքությունը թափանցելու համար:

Բնակլիմայական պայմաններից որոշ չափով կախված էր նաև հիմնական ու սեզոնային բնակարանների շինանյութի տեսակը: Գլխատները հիմնականում քարաշեն էին, սակայն Արևելյան Հայաստանում կառուցվել են նաև կավաշեն տներ: Վերջինիս տարածումն ընդգրկել է Արարատյան հովիտը, Վայոց ձորը և Սիսիանը: Դա առաջին հերթին պայմանավորված էր այստեղ կավահողերի լայն տարածմամբ, որի հետևանքով կավը վերածվել էր կարևոր շինանյութի: Դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ նշված շրջաններում սակավ էին տեղումները[24]: Սեզոնային կառույցները փայտաշեն էին

---

[20] *«Բարոն Ա. Հաքստհաուզենի ճանապարհորդությունից».– «Կռունկ հայոց աշխարհի» (Թիֆլիս), 1862, էջ 25:*

[21] *Ե. Լ ա լ ա յ ա ն. 1896, Ա.Հ., գ. Ա, էջ 220 և այլն:*

[22] С. Д. Л и с и ц и а н. 1925, с. 55–70.

[23] *Վ. Բ դ ո յ ա ն. 1974, էջ 73–84:*

[24] *Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրությունը, 1971, էջ 184, 226:*

անտառաշատ շրջաններում (Տավուշ, Լոռի, Զանգեզուր, Ղարաբաղ) և քարաշեն, որտեղ դրանք բացակայում էին (Շիրակ, Գեղարքունիք)[25]:

Որպես փակ համալիրի բնորոշ հատկանիշներից մեկը՝ սովորաբար նշվում է «հազարաչեն» ծածկը, որի կիրառման հիմնական պատճառը համարվել է կարճ գերաններով մեծ թռիչքներ ծածկելու անհրաժեշտությունը, քանի որ երկար գերանների պակասություն կար[26]: Սակայն գրառված նյութերը ցույց են տալիս, որ ծածկի այդ ձևը միակը չի եղել փակ համալիրի տարածման շրջաններում, և այնտեղ զգալի տեղ են գրավել նաև գերանների զուգահեռ չարվածքով ծածկերը: Այնպես որ, ծածկերի առաջացման հարցերը դեռևս քննարկման կարիք են զգում:

Գլխատան գմբեթաձև ծածկը նույնպես կատարելագործվել է տան ընդհանուր զարգացման հետ: Ծածկի գմբեթայնությունը պայմանավորվել է նախևառաջ տան մեջ բաց օջախի առկայությամբ: Գմբեթաձև ծածկն ավելի լավ, քան հարթ ծածկը նպաստել է օջախի ծխի համեմատաբար արագ հեռացմանը: Միաժամանակ նման ծածկը ինչ-որ չափով նպաստել է լուսամուտներ չունեցող տան՝ քիչ թե շատ հավասարաչափ լուսավորմանը: Իսկ լուսամուտների բացակայությունը պայմանավորված էր տան գետնափոր կամ կիսագետնափոր տեղադրությամբ ու չարունակվել է ավանդույթի ուժով նաև գետնի երես դուրս գալուց հետո: Տան կոնաձև ծածկը բացառել է դրսից մեծ քանակությամբ մթնոլորտային տեղումների կուտակումը տանիքի վրա[27]:

Ծածկի բարձրությունը Հայաստանի տարբեր շրջաններում տարբեր էր: Դա երևի չպետք է կապել փայտանյութի առկայության կամ պակասության հետ, որովհետև Շիրակում, որտեղ փայտը սակավ էր, ծածկերը բավական բարձր էին, իսկ, օրինակ, Տավուշում՝ ընդհակառակը: Ցածր էին նաև Արարատյան հովտի գլխատների ծածկերը: Այդ հանգամանքը բացատրվում է տեղումների պակասությամբ և, մասնավորաբար, տների փոքր չափերով, որն իր հերթին պայմանավորված էր նաև դրանցում բնակվողների ոչ մեծ թվով, գերդաստանական բազմանդամ տների սակավությամբ: Ուշագրավ է, որ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո Արևելյան Հայաստանում արագացավ գերդաստանական տների տրոհման գործընթացը:

Ըստ ծածկաձևի ևս գլխատների տիպերը տարբեր են: Գրականության մեջ սովորաբար մատնանշվել է գլխատան ծածկի երկու տարբերակ՝ արևմտահայկական ու արևելահայկական, որոնցից առաջինին բնորոշ էր հազարաչեն ծածկը, որով և անվանվել է մեկ տանիքի ներքո համախմբված բնակելի ու տնտեսական կցակառույցներով ամբողջ համալիրը, իսկ երկրորդին՝ մինչև Արևմտյան Հայաստանից հայ բնակչության ներգաղթը հիմնականում բնորոշ էին գերանների զուգահեռ չարվածքով հարթ ծածկը և բնակելի ու տնտեսական կառույցների առանձնացված լինելը: Այդ հանգամանքն առա-

[25] Ю. И. Мкртумян. 1974, с. 56–57:

[26] *Ս. Վարդանյան. 1959, էջ 119,* Ն. Պապուխյան. *1972, էջ 134:*

[27] *Ստ. Լիսիցյան. 1969, էջ 101,* Т. А. Чиковани. 1964, с. 5; Т. А. Чиковани. 1971, с. 66–67.

ջին անգամ նշել է Ի. Պանտյուխովը[28], իսկ հետագայում կրկնել և հիմնավորել են այլ հեղինակներ[29]:

Ուշադրության է արժանի պատմական Հայաստանի երկու հատվածներում XIX դարում և XX դարասկզբներին տարածում գտած մի քանի ծածկաձևեր ևս:

Ծածկի դասական ձևը, որը հատկապես լեռնային ցրտաշունչ շրջաններում էր տարածված, հազարաչեն էր: Իսկ վերջինս մեծ բազմազանություն ուներ: Տարածված ձևերից էր եռանավ ծածկը՝ զույգ գերաններով՝ երկուական կամ մեկական այուներով, ինչպես նաև՝ երկու կիսագմբեթավոր երդիկներով: Երկնավ և եռանավ ծածկաձևերն առավել չափով գոմածածկին էին բնորոշ: Մեկ այլ տիպ էր հազարաչենի ու գոմածածկի խառնուրդով Այունիքում տարածում գտած բազմագերան ծածկաձևը: Արարատյան հովտում պահպանված հարթ ծածկաձևը իրականացվել է եռանավի սկզբունքով, կենտրոնում ունեցել է ծխաքաշ գմբեթ: Հարթ ծածկաձևն անխուսափելիորեն առաջացնում էր հարթ, գմբեթաձև ծածկը՝ բլրաձև, երկնավ ծածկը՝ ձկնամեջք կոչվող երկթեք կտուր, եռանավ ծածկը՝ կլորավուն կտուր: Բացի հազարաչենից՝ բոլոր ծածկաձևերի դեպքում կրակարանի ծուխը վատ էր քաշվում, ուստի ծխերդիկների վրա դրվում էին լրացուցիչ ծխաքաշներ: Ամենատարածվածը կողովաձև ճիպոտահյուս ծխաքաշն էր, որը հարդախառն ցեխի կամ հարդախառն գոմաղբի սվաղ էր ունենում: Արարատյան հովտում լայնորեն տարածված էր նաև մանր տախտակներից հազարաչեն ծածկի ձևով կազմված մանրակերտ ծխաքաշը՝ նուշնպիսի սվաղով: Արևմտյան Հայաստանում տարածված էր երդիկի վրա բուխարիկ կոչված քարաչեն ծխաքաշը: Ամենուրեք իբրև ծխաքաշ օգտագործվում էին ծակված կիսակարասներն ու կճուճները: Այս արհեստական ծխաքաշների բարձրությունը հասնում էր 50–100 սմ-ի, իսկ Կարին-Ալեքսանդրապոլում և Ախալցխա քաղաքներում՝ ավելի քան 1 մ-ի: Ժամանակակիցների վկայությամբ՝ XIX դարում ամենուրեք տարածված այդ ծխաքաշները հայկական գյուղական բնակավայրերի արտաքին ամենաաչքի ընկնող պարագաներն էին, որոնցով էլ հաշվում էին ընտանիքների (ծխերի) թիվը[30]:

Ազգագրական դիտարկման տեսակետից կարևոր է նաև գլխատան ներսույթի ուսումնասիրության խնդիրը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե տարբեր ժողովուրդների մեջ կարող են գիտվել նույն տիպի բնակելի տներ, ապա դրանց ներսույթը՝ որպես արգասիք տվյալ էթնիկ ընդհանրության կենցաղամշակութային առանձնահատկությունների, անպայման տարբեր դրսևորումներ ուներ[31]: Նախ, պատմագրական բազում նյութեր ևս ցույց են տալիս բնակարանային համալիրի ոչ միայն ներսույթի, այլև արտաքին ձևավորման խղճուկ, անհրապույր տեսքը, որը, ըստ ժամանակա-

---

[28] И. Пантюхов. 1896, с. 82.

[29] *Խ. Սամուելյան. 1941, հ. II, էջ 199–209;* А. Якобсон. 1950, с. 157–159; С. Лисициан. 1955, с. 205–207; В. П. Кобычев, А. Н. Робакидзе. 1967, с. 28.

[30] *Մ. Տեր-Մովսիսյան. 1894:*

[31] А. Марутян. 1989, с. 63–142.

կիցների, տիրող օտար վարչաձևերի հայահալած քաղաքականությունից խույս տալու միջոցներից էր: Գ. Սրվանձտյանցը, Սեբաստիայում եղած ժամանակ, դիտել է հայի հագուկապի և բնակության խղճուկ վիճակն ու արձանագրել. «Մեզ ցույց կուտային քաղաքի մեջ այնպիսի հայեր, որ մուրացկանի ձևով հագնված էին, բայց քանի մը հազար ոսկվո տեր էին. այնքան զորացած է բռնավորած երկյուղին այս ողորմելյաց վրա, որ չեն համարձակիր իրենց հարուստ լինելը ցույց տալ, գաղտուկ-մաղտուկ գործեր կ՚ընեն, ցած և հին տներու մեջ կը բնակին, ստակնին կը թաղեն, վասն զի եթե հայտնվի իրենց ունևոր լինելը, կը վախենան թե խլեն ձեռքներեն»[32]: Համաձայն ուսումնասիրությունների և ձեռքի տակ եղած ազգագրական նյութերի՝ գլխատունն ուներ համեստ կահկարասի և վերջինս լրացնող պարագաներ: Ծավալուն իրերն էին տախտակե կամ կավե և ծեփածո փեթակները՝ հացի ամբարները, հարսների օժիտի զարդարված սնդուկները, օրորոցները, կարճաոտ սեղան-քուրսին և այլն: Ոմանք ունեին փայտե անշարժ որմնաթախտեր կամ շարժական բազմոցներ, որոնց վրա ցերեկն աշխատում և հանգստանում էին, գիշերը՝ քնում: Դրանք ծածկվում էին խսիրներով, կարպետներով, գորգերով, թաղիքներով, փալասներով և այլն: Մեծերի ու պատվավոր հյուրերի համար նստելու ներքնակներ և բարձեր էին դրվում: Պատրհանները և փայտե շարժական պահարանները ծառայում էին տոնական զգեստները, սպիտակեղենը և անկողինը պահելուն, իսկ սյուներին ու պատերին ամրացված փայտե, եղյուրե և մետաղե կախիչները՝ ամենօրյա հագուստը կախելուն: Հացի սեղանը, քուրսին, տախտակե երկար նստարանը, մինդարները, պղնձե մեծ սկուտեղները, սեղան-սփռոցը, փայտե զարդարուն սկուտեղը և այլ պարագաներ ծառայում էին ճաշկերույթներին ու հանգստին:

Լուսավորության միջոցներ էին ձեթի, ապա՝ նավթի ճրագն ու լամպը, կրասաձև (գլխիվայր դրվող) ճրագակալը, մետաղե և փայտե ճրագակալներն ու մոմակալները և այլն: Ներսույթի հաճելի տեսքին էին ծառայում գլխավոր սյուների, դրանց խոյակների, ամբարների, հացի և հարսների սնդուկների զարդաքանդակները, կավե ու բրդե հյուսածո աղամանները, խեցեղենի շարքերը, նորապսակների գունավոր և ծոպավոր վարագույրները, փայտե ու հյուսածո գդալամանները: Յուրատեսակ արվեստին ու կրոնական հայեցողություններին էին ծառայում ամբարների, խոյակների, սյուների գլխամասերի և այլ պարագաների վրա փորագրվող սվաստիկաները, խաչերը, հավերժության նշանները, երկնային լուսատուների խորհրդանշանային պատկերները, տունը կարծեցյալ չար աչքից պաշտպանելու մեծածավալ հմայիլ-դաղդաղանները, երկնային քարերից պատրաստված ուլունքաշարերը, տիկնիկները և այլն:

Կրակատուն-գլխատանը մինչև XX դ. առաջին քառորդը պահպանվում էին անթեղը վառ պահելու սովորությունները: Ընդ որում՝ գոմի օղայի բուխարիի անթեղի հսկողությունը համարվում էր տան նահապետի, իսկ գլխատան թոնրի անթեղինը՝ նրա կնոջ պարտականությունը: Տանտիկնոջ խոհանոցային ամբողջ աշխատանքները կենտրոնացած էին թոնրի շուրջը, իսկ նահա-

[32] *Գ. Սրվանձտյանց. 1982, հ. 2, էջ 254:*

պետը ցուրտ ժամանակ իր օրն անցկացնում էր գոմասենյակի բուխարիկի շուրջը:

Գվխատունը, որպես ծիսապաշտամունքային կենտրոն, «սուրբ օջախ», համարվում էր հիմնականում բնակավայրի հիմնախնդիրների՝ համայնքային մակարդակով գործունեություն վարած նշանավոր տոհմերի կամ ընտանիքների տները: Նման «սուրբ օջախներն» այն գյուղերում, որտեղ եկեղեցի չկար, փաստորեն, փոխարինում էին նրան՝ իրենց վրա վերցնելով պսակի ծիսակատարությունը: Ուշագրավ է, որ թոնիրն էլ օջախին համազոր հանդես էր գալիս որպես ընտանեկան ծեսերի և արարողությունների կենտրոնավայր[33]:

Ազգագրական ուշագրավ ուսումնասիրություններ համաձայն՝ գվխատունը նաև յուրատեսակ ծիսապաշտամունքային կենտրոն էր: Բուն տան հողաթումբ վերնատունն իր կրակարանով (թոնիր) համապատասխանում է եկեղեցու բեմին (Հմմտ. Սուրբ Էջմիածնի մայր տաճարի բեմի տակ պեղված ատրուշանը), ըստ որում՝ թոնրի շուրջը նաև կնունք ու պսակ է արարվել՝ ինչպես եկեղեցում, որով պաշտամունքային արմատները ճգվում են բնապաշտական, հեթանոսական ժամանակների խորքը՝ կապված կրակի սրբագործող ուժի հետ[34]: Տան նահապետի և տանտիկնոջ կողմից կրակի պահպանման դերով էր պայմանավորված այն՝ այս գույգը քնում էր թոնրի մոտ[35], որպիսի երևույթը Ստ. Լիսիցյանը համեմատել է հույների տանտերուհու հատուկ ննջարանի հետ[36]: Միջին դարերից ցայսօր թոնիրները, որպես հացթուխի կրակարան, տարածված են ամենուրեք, բացի Սասնա լեռնային շրջաններից: Հ. Մարությանը ուշագրավ մի հոդվածում անդրադարձել է «տան սրբերի»՝ նարեկների, ավետարանների, խաչերի, շուշպանների՝ հայկական գերդաստանական տներում ընդունված պաշտամունքներին[37]:

Գործառութային առումով գվխատները ժողովրդի կյանքում մեծ դեր են խաղացել: Տարվա մեծ մասը բնակչությունն անցկացնում էր այս հարկաբաժնում՝ կազմակերպելով բազմաթիվ միջոցառումներ: Գվխատունը նախևառաջ կանանց, իսկ գոմի օդան տղամարդկանց հավաքատեղին էր: Կանայք իրենց տնային ամբողջ տնտեսությունն ու տնայնագործական աշխատանքների զգալի մասը (գորգագործություն, կարպետագործություն, խսիրագործություն, բրդի մշակում և այլն) կատարում էին գվխատանն ու գուգահեռ սրահում կամ շվաքում, ցերեկը երբեմն նաև գոմի օդայում:

Գվխատունը միակ խոհանոցն էր, որտեղ պատրաստում էին բոլոր կերակուրներն ու թխում հացը: Այն նաև կանանց սեղանատունն էր, զրուցարանն ու երեխաների խաղարանը:

---

[33] *Ե. Լալայան. 1898, էջ 98, 159,* И. Петрушевский. 1930, с. 4.

[34] С. Лисициан. 1955, с. 208.

[35] *Թոնիրը վկայված է դեռևս ուրարտական շրջանից: Ուրարտուում կային թե՛ թաղվող և թե՛ գետներեսյա թոնիրներ* (Б. Б. Пиотровский. 1950, с. 24)*: Արտաշատում գտնվել են հացթուխի և երկաթագործի թոնիրներ՝ II դ. Ք. ա.– III դ. Ք. հ.* (Ф. И. Тер-Мартиросов. 1975, с. 70–84)*:*

[36] С. Лисициан. 1926, с. 64.

[37] *Հ. Մարության. 2001, էջ 337–346:*

Գոմի օդանների փոքրաթվալ լինելու դեպքում ընտանեկան խրախճանքները, գյուղական ընդհանուր ժողովները և գուսանական ելույթների ունկնդրումները տեղի էին ունենում գլխատներում: Եվ, վերջապես, այն բոլոր շրջաններում, որտեղ գոմի օդանները զբաղեցնում էին մշակներն ու հյուրերը, գլխատունը գերդաստանի ննջարանն էր: Հողե հատակին լայնորեն օգտագործվում էին խոնավությունը մեկուսացնող խսիրներ:

Բացառիկ դեպքերում, սակայն, երևում էին տախտակե հատակով շքեղ ննջարան-օթախներ, հյուրասենյակներ, դրսից առանձին մուտքով, հարթ ծածկով, պատուհաններով, որոնք ծածկվում էին ձևթոտված թղթով:

Ընդհանրապես, գլխատունը կապվում է ընտանեկան համայնքների՝ գերդաստանական տների առկայության հետ՝ համարվելով դրան բնորոշ բնակարանի տիպ[38]: Հատկանշական է, որ «տուն» արտահայտությունը հայերի մեջ ունեցել է ոչ միայն նյութական միավորի նշանակություն, այլև սոցիալական խմբի՝ տոհմի կամ ընտանիքի[39]: Մեծ ընտանիքները կամ գերդաստանները XIX դարավերջին և XX դարասկզբին դեռևս շարունակում էին կայուն կերպով պահպանվել Հայաստանի ավանդապահ շրջաններում[40]: Սակայն արդեն XIX դ. վերջերից, կապիտալիստական հարաբերությունների տարածմանը զուգընթաց, գերդաստանները տրոհվում էին, որով վերանում էր նաև խոշոր գլխատների անհրաժեշտությունը: Այդ գործընթացն ավելի արագ էր ընթանում հատկապես Արարատյան հովտում և նախալեռնային որոշ շրջաններում, ավելի դանդաղ՝ լեռնային շրջաններում: Եվ պատահական չէ, որ Շիրակում մեծ չափեր ունեցող գլխատներն ավելի շատ էին, քան Արարատյան դաշտավայրում:

Իսկ ինչպե՞ս են անդրադարձել տնտեսության ձևերն ու բնույթը բնակարանային համակառույցի վրա: Տնտեսական գործունեությունը լայնորեն ազդել է բնակարանի բովանդակ գոյության, դրա ձևերի, բնույթի վրա՝ ժամանակագրական և ազգագրական առանձնահատկություններով հանդերձ: Տնտեսական գործոններով պայմանավորված՝ հնավանդ միատարը կառույցը վերածվել է բարդ բազմագործառույթ բնակարանի՝ տնտեսական-արտադրական նշանակության համակառույցների հավելումով: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի բոլոր շրջաններում էլ տարածված էր գոյակից երկրագործա-անասնապահական տնտեսությունը՝ երկրագործության գերակշռությամբ: Դրանով պայմանավորված՝ կալը հիմնականում գյուղի ծայրում և սակավ դեպքերում բնակելի տան առջև էր պատրաստվում, որի կողքին հացահատիկի խրձերը կամ չամբարված ցորենը վատ եղանակից պաշտպանելու համար երեք կողմից փակ ու դիմացից բաց մի ծածկ էին սարքում՝ «տեպ», «կլասան» (Տավուշ), այլ տեղերում՝ «կալտուն» անվանումներով: Հացահատիկը պահում էին հորերում կամ տան մեջ տեղադրված ամբարներում, որոնք տարբեր ձևեր են ունեցել՝ հյուսածո-ծեփածո, կավաչեն, փայտե: Առանձին չենք՝ ամբարտուն, առավել շատ գրանցվել է Շիրակում: Պետք է կարծել, որ

[38] Э. Карапетян. 1958, с. 69; *Ռ. Նահապետյան. 2004, էջ 43–51:*

[39] Н. Джавахов. 1905, с. 84–89.

[40] Э. Карапетян. 1958, с. 133–134; *Ռ. Նահապետյան. 2004, էջ 60–72:*

քարե պատերով ամբարներ եղել են նաև Ջավախքում: Եվ դա պատահական չէ. նշված շրջանները դաշտավարական կարևոր կենտրոններ էին[41]:

Ինչ վերաբերում է անասնապահական տնտեսությանը, ապա դրա գոյությամբ է պայմանավորված սեզոնային բնակավայրերի ու բնակարանների, ինչպես նաև մի շարք այլ կառույցների առկայությունը հիմնական բնակարանային համալիրներում՝ գոմ, փարախ, մարագ: Զանդրադառնալով դրանց կառուցվածքային առանձնահատկություններին՝ մատնանշենք այն փաստը, որն արտահայտվել է նաև գրականության մեջ, որ արևմտահայերի ու արևելահայերի գոմերի հորինվածքային և ներսույթի կառուցվածքները տարբեր էին: Վերջինների համեմատ՝ առաջինները նշվում են որպես մեծ չափեր ունեցող և ճարտարապետությամբ ավելի աչքի ընկնող[42]: Այդ երևույթի բացատրությունը կարելի է գտնել անասնապահության բնույթի մեջ: Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի գյուղերում անասունը երկարատև ձմեռվա ընթացքում պահվել է բնակավայրում, դխխատանը կից կառուցված գոմում: Հակառակ դրան՝ Տավուշում, Լոռիում, Զանգեզուրում և Արցախում ձմռանը անասունը հիմնականում պահվել է գյուղից հեռու գտնվող ձմեռանոցներում, որտեղ կառուցվում էին գոմ ու բնակելի չենք[43]: Եվ բնական է, որ հիմնական գյուղում գտնվող անասնաշենքերին պատշաճ ուշադրություն չէր դարձվում: Եվ գուցե այս հանգամանքով էր պայմանավորված նաև այն, որ նշված շրջաններում գոմի օդան չզարգացավ:

Արարատյան Հովտում և Մեղրիում, որտեղ զարգացած էր այգեգործությունն ու խաղողագործությունը, բնակարանային համալիրում ներառված էր հնձանը (չիրխանա), որը մնացած շրջաններում բացակայում է:

Բնակարանների տիպերի ու դրանց որոշ առանձնահատկությունների ձևավորման վրա ազդել են բնակչության տեղաշարժերը, ներէթնիկական խմբերի և միջէթնիկական հարաբերությունները:

Շիրակի, Գեղարքունիքի, Ջավախքի բնակարանային տիպերը կրկնությունն են Բարձր Հայքի բնակարանային համալիրների, որտեղից 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմից հետո զգալի թվով հայեր գաղթել ու բնակություն են հաստատել այս շրջաններում՝ հարազատությամբ պահպանելով իրենց նախկին բնակարանների ճարտարապետական լուծումները, որոնք միանգամայն համապատասխանում էին նոր բնակավայրի աշխարհագրական ու կլիմայական պայմաններին, առկա չինանյութին[44]: Դա, անշուշտ, այդպես է, եթե հաշվի առնենք, որ XIX դ. սկզբին այդ շրջաններում հայ բնակչություն համարյա չէր մնացել, և դժվար է ասել, թե նախկինում բնակարաններն այստեղ ինչ տիպի են եղել: Բարձր Հայքին բնորոշ չենքերը բաղկացած էին երեք հիմնական մասից. ա) չվաք, բ) տուն և գ) գոմ, որոնք

---

[41] *Ախալքալակի շրջանի կարզախ գյուղի մասին Կ. Գրիգորովը գրում է. «Յուրաքանչյուր տանտեր ուներ մարագ, խոտանոց, կալ, ամբարանոց և հացի ամբար, որը հաճախ հիմնվում էր տան մեջ»* (К. Григоров. 1893, вып. XVII, с. 93)*: Նշանակում է՝ դրսում եղել է նաև քարե պատերով ամբար:*

[42] Народы Кавказа, 1962, т. II, с. 498; Т. А. Чиковани. 1971, с. 46.

[43] Ю. И. Мкртумян. 1974, с. 46–47.

[44] *Խ. Սամուելյան. 1941, հ. II, էջ 203,* С. Д. Лисициан. 1927, с. 55–70.

միասին կազմում են քառանկյուն մի կառույց, Խ. Սամուելյանի ներկայացմամբ՝ նման «տճև ամրափակ արկղի»[45]: Դրանք, ըստ գիտնականի դիտարկումների, նախնական շրջանում եղել են գետնափոր, XIX–XX դդ. սկզբներին՝ կիսագետնափոր, շատ դեպքերում երեք պատերն ամբողջովին սարի լանջի մեջ թաղված, իսկ չորրորդ՝ առաջակողմինը, գետնի երեսից չարված: XX դ. առաջին տասնամյակներին ամբողջ կառույցը գետներեսյա էր: Ճակատային պատը խնամքով և տաշված քարերով էր շարված:

Գվխատան տիպը բնորոշ է միայն հայերին: Վրաստանում այն տարածված է հայերով բնակեցված շրջաններում: Աղրբեջանում «ղարաղամ» կառուցում էին հայերը[46]:

Խնդրո առարկա ժամանակահատվածում հայերն Անդրկովկասում շփվել են վրացիների, կովկասյան թաթարների, քրդերի ու պարսիկների հետ: Գվխատան տիպի տները որոշ չափով բնորոշ էին նաև հարևան երկրների հայաշատ վայրերին, և դա համարվում է հայերից եկվորների ընդհանուր ճեռքբերումը, ինչը մշակութային-պատմական երկարատև կապերի հետևանք էր[47]: Գրականության մեջ, սակայն, կան նյութեր, որոնք վկայում են, որ XIX դ., հատկապես՝ Արցախում և հարակից շրջաններում, թաթարների համար «ղարաղամներ» կառուցում էին հայ վարպետները[48]: Ինչ վերաբերում է քրդերի շրջանում գվխատների տարածմանը, ապա այն համարվում է փոխառություն հայերից, և առավելապես բնորոշ էր Հայաստանի տարածքում ապրող քրդերին[49]:

Համանման տարբերակներ Լոռիում արձանագրել է Ե. Լալայանը[50]: Նա մատնանշել է նաև հայ-պարսկական փոխազդեցությունների մասին Նախիջևանի գավառում, որտեղ բնորոշ էր փողոցից տների մեկուսացումը[51]:

Ճամբարակում գրանցվել են փայտաշեն տներ. մի բան, որ ընդհանուր առմամբ հայերին բնորոշ չի եղել, բացառությամբ Սև ծովի ափերին ապրող համշենահայերի[52], որտեղ փայտաշեն տները յուրօրինակ բնակլիմայական պայմանների հետևանք են: Իսկ Ճամբարակում դրանց առկայությունը պետք է բացատրել որպես ռուս վերաբնակիչների հետ շփման հետևանք, որոնք այդ շրջանում ապրում են XIX դ. կեսերից սկսած[53]:

Փոխազդեցություն է նկատվում նաև սեզոնային բնակարանների միջև: Դեռևս XIX դ. երկրորդ կեսի որոշ հեղինակներ սեզոնային բնակարանները նկարագրելիս, որպես հայերին բնորոշ տիպ նշել են քարաշեն մշտական կացուն բնակարանը, իսկ վրանատիպ ժամանակավոր կացարանները համարվել են փոխառություն քրդերից ու թաթարներից[54]: Նյութերի քննությունը ցույց է տալիս, որ, իրոք, այդպես է. ինչպես հայտնի է, թաթարների մի մասը

---

[45] *Խ. Սամուելյան. 1941, հ. II, էջ 199:*

[46] В. П. Кобычев. 1957, с. 64–66; А. Марутян. 1989, с. 71–72.

[47] А. Чиковани. 1971, с. 67–68.

[48] Н. Давидбеков. 1888, с. 180–181; С. Д. Лисициан. 1925, с. 100.

[49] Т. Ф. Аристова. 1966, с. 87–89.

[50] *Ե. Լալայան. 1902, ԱՀ, գ. IX, էջ 200:*

[51] *Ե. Լալայան. 1904, ԱՀ, գ. XII:*

[52] *Հ. Մուրադյան. 1899, ԱՀ, գ. Դ:*

[53] *Հայ ժողովրդի պատմություն, 1974, հ. 5, էջ 224–225:*

[54] П. С. Варавин. 1888, с. 26; А. Калантар. 1895, с. 93.

և քրդերի հիմնական մասը նախքան 1917 թ. հեղափոխությունը վարում էին կիսաքոչվոր և քոչվորական կյանք[55]: Անընդհատ տեղաշարժերի պատճառով նրանք ստիպված էին կառուցել չարժական վրանատիպ կացարաններ, մի բան, որի կարիքը հայերը զրեթե չէին զգում, որովհետև ամառանոցներում մնալով կարճատև և չունենալով ճանապարհային միջանկյալ կանգառներ՝ հիմնականում բավարարվում էին մեկ տարածքով ու տեղափոխություններ չէին կատարում: Բայց, քանի որ քրդերն ու թաթարները հաճախ էին հայերի հետ միևնույն արոտավայրերից օգտվում[56], ապա բնական է ենթադրել՝ հայերը նրանցից փոխառած լինեն բնակարանի նշված տիպը: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ վրանատիպ կացարանի ձևերը հայերի մեջ կոչվում էին միայն օտար անվանումներով: Հայտնի են նաև դեպքեր, երբ թաթարական որոշ ընտանիքներ հայերի օրինակով ամառանոցներում կառուցել են մշտական բնակարաններ:

XIX դ. վերջին որոշ քաղաքների հետ ավելի սերտ շփում ունեցող շրջաններում (Արցախ, Զանգեզուր, Այրարատ, Լոռի) որպես նոր երևույթ սկսեց տարածում գտնել «օթախ» կոչված հյուրասենյակը, որը համարվում էր ունևորության չափանիշ: Այդուհանդերձ, այն եզակի երևույթ էր, ուստի և գերակշռողը շարունակում էր մնալ գլխատունը:

Եզրակացություն

Պատմական Հայաստանի երկու հատվածներում ի սկզբանե մինչև XIX դ. վերջը և XX դ. սկզբները բնակարանային համալիրի ամենալայն տարածում գտած տիպը գլխատունն է: Բնակարանի այդ ձևը տարածված է եղել նաև Հայաստանի հարևան երկրներում, որոնցում հայ բնակչության թիվը զգալի էր:

Պատմական Հայաստանի բնակլիմայական ու աշխարհագրական պայմանների խիստ բազմազանությունը, տնտեսական զբաղմունքների բնույթը, վառելանյութի և շինանյութի հնարավորությունները, ազգային մտածողությունն ու դարավոր ավանդույթները, երկրի ռազմաքաղաքական վիճակը, բնակչության սոցիալական շերտավորման աստիճանը, հարևան ժողովուրդների հետ շփումներն իրենց ազդեցությունն են թողել հայ ժողովրդական բնակարանային համալիրի տեղանքի, չափսերի, բաղադրատարրերի հարաբերակցության, կառուցվածքային հորինվածքի և ներսույթի կազմակերպման յուրահատկությունների ձևավորման վրա:

Մասնավորապես, գերդաստանական մեծ ընտանիքներով ապրելու դարավոր ավանդույթով պայմանավորված՝ գլխատները կառուցվում էին մեծ մակերեսներով, քանզի դրանք բազմազործառույթ էին: Հատկապես Արևմտյան Հայաստանում կյանքի անապահովվածությունն ու մշտական կողոպուտները հարկադրել են մարդկանց համախմբված ապրել: Գլխատուն հարկաբաժինը ներառում էր գերդաստանի ննջարանը, խոհանոցը, սեղանա-

[55] Народы Кавказа, 1962, т. II, с. 104, 603.

[56] П. С. Варавин. 1888, с. 123–124; А. Д. Ерицов. 1856, с. 26; С. П. Зеленский. 1885, т. I. с.

տունը, աշխատանոցը, գրուցարանը և ընտանեկան ու համայնքային հանդիսությունների, հոգևոր արարողությունների անցկացման վայր էր:

Պատմական Հայաստանում XIX դարում և XX դարի սկզբներին երկրի ներսի ու դրսի այլազգի թշնամական տարրերի ալան-թալանից մշտապես սպառնացող վտանգը հայ մարդուն հարկադրել է բնակարանը տնտեսա-արտադրական շինություններով հիմնել մեկ ծածկի տակ՝ դարձնելով յուրատեսակ ռազմական ամրոց: Հորինվածքային լուծումներով փակ համալիրը համապատասխանել է հիմնականում արևմտահայկական ու արևմտահայերով բնակեցված արևելահայկական բնակավայրերին, իսկ ազատ և բաց համալիրները բնակլիմայական մեղմ պայմանների ու ազգային ավանդույթի արդյունք էին:

Ռաֆիկ Նահապետյան – պ. գ. դ., ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրություննները՝ հայ ազգագրություն, հայ ազգագրության պատմություն: Հեղինակ է 9 մենագրության, 4 ուսումնական ձեռնարկի և 180 հոդվածի:
rafiknahapetyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Խ. 1961, Գյուղական տների կառուցվածքը. Երկեր, հ. 10, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, էջ 59–96:

«Բարոն Օ. Հաքստհաուզենի ճանապարհորդությունից».–«Կռունկ հայոց աշխարհի» (Թիֆլիս), 1862, թիվ 1, էջ 20–33:

Բդոյան Վ. 1974, Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 288 էջ:

Բդոյան Վ. 1963, հ. 1, Հայ ժողովրդական խաղեր, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 295 էջ:

«Էմինեան ազգագրական ժողովածու», 1902, հ. Գ, Մոսկվա–Վաղարշապատ, 381 էջ:

Լալայան Ե. ԱՀ, 1896, գ. Ա, Զավախք.– Ազգային գրական հանդես, Շուշի, տպ. Ա. Մահտեսի-Հակոբեանց, էջ 224–226:

Լալայան Ե. 1898, Վարանդա: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռօտինեանցի, էջ 21–25:

Լալայան Ե. ԱՀ, 1902, գ. IX, Բորչալուի գավառ, Թիֆլիս, էջ 197–204:

Լալայան Ե. ԱՀ, 1904, գ. XII, Նախիջևանի գավառ, Թիֆլիս, էջ 109–111:

Լիսիցյան Ստ. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 96–114:

Կարապետյան Ե. 1962, Սասուն (ազգագրական նյութեր), Երևան, էջ 46–56: Համառոտ բառարան պարսկերեն–հայերեն, 1858, Բ, Վիեննա, 874 էջ:

Հակոբյան Հովհ. 1934, հ. Զ, Ուղեգրություններ, ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800–1820), Երևան, Պետհրատ, 278 էջ:

Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրությունը, 1971, Երևան, 469 էջ:

Հայ ժողովրդի պատմություն, 1974, հ. 5, Երևան, 683 էջ:

Մարության Հ. 2001, «Տան սուրբ» երևույթը, ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները.– Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 337–346 :

Մուրադյանց Հ. ԱՀ, 1899, գ. Դ, № 2, Համշենի հայեր, Թիֆլիս, էջ 123–128:

Նահապետյան Ռ. 2021, № 1, Գլխատան ավանդույթային տիպերը Արևելյան Հայաստանում (XIX դար – XX դարասկիզբ).– «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», էջ 25–40:

Նահապետյան Ռ. 2020, թիվ 2, Հայկական լեռնաշխարհը բնակարանաշինական ավանդների հնագույն կենտրոն.– «Պատմություն և քաղաքականություն» (գիտական հանդես) (Երևան), էջ 96–108:

Նահապետյան Ռ. 2020, գիրք 3, Հայկական ժողովրդական բնակարանի ազգագրական ուսումնասիրության շուրջ.– Ազգաբանական ուսումնասիրություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 392 էջ:

Նահապետյան Ռ. 2004, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, էջ 42–51:

Նահապետյան Ռ. 2019, գիրք 2, Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գիտական և գիտակազմակերպչական գործունեության էջերից.– Ազգաբանական ուսումնասիրություններ, Երևան, 328 էջ:

Պապուխյան Ն. 1972, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, էջ 168:

Պետոյան Վ. 1965, Սասնա ազգագրություն, Երևան, էջ 188–206:

Սամուելյան Խ. 1941, հ. II, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, էջ 191–236:

Սարգսյան Լ. 1890, Այց Թիւրքաց Հայաստանին, Թիֆլիս, 82 էջ:

Սրվանձտյանց Գ. 1982, հ. 2, Երկեր, Երևան, 254 էջ:

Վարդանյան Ս. 1959, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Երևան, Հայպետհրատ, 131 էջ:

Վարդումյան Դ. 2004, № 2, Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի բնութագրությունը.– ՊԲՀ, էջ 48–64:

Տեր-Մովսիսյան Մ. 1894, Հայ գյուղական տունը, Վիեննա, 84 էջ:

Քսենոփոն. 1970, Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 282 էջ:

Օհանյան Կ. 1977, Հայկական ՍՍՀ ֆիզիկա-աշխարհագրական շրջանացումը, Երևան, էջ 266–269:

Аристова Т. Ф. 1966, Курды Закавказья. М., «Наука», 214 с.

Варданян Л. 1981, Традиции мужских возрастных групп у армян (конец XIX – начало XX вв.).– Армянская этнография и фольклор (АЭФ). Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, вып. 42, с. 87–142.

Варавин П. С. 1888, Летние и зимние пастбища Закавказского края.–Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. V. Тифлис.

Витов В. 1953, О классификации поселений.– «Советская этнография» (СА) (М.). № 3, с. 27–38.

Григоров К. 1893, Селение Карзах Ахалкалакского уезда Тифлисской губернии.– Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. XVII. Тифлис.

Давидбеков Н. 1888, Село Гадрут Елисаветпольской губернии Джебраильского уезда. – СМОМПК, вып. VI, с. 180–181.

Джавахов Н. 1905, Государственный строй древней Грузии и древней Армении. СПб., Тип. Имп. акад. наук, 153 с.

Ерицов А. Д. 1856, Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветпольской губернии. – Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (МИЭБГКЗК), т. II. Тифлис.

Зеленский С. П. 1885, Экономический быт государственных крестьян в Шорагяло Александропольского уезда Эриванской губернии. – МИЭБГКЗК, т. I.

Карапетян Э. 1958, Армянская семейная община. Ереван, Изд. АН АрмССР, 143 с.

Калантар А. 1895, Алагязские казенные летние пастбища Александропольского и Эчмиадзинского уездов Эриванской губернии. – Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе, т. III. Тифлис.

Кобычев В. П. 1957, Жилище народов Восточного Закавказья в XIX в.– СЭ, № 3, с. 64–66.

Кобычев В**.** П**.**, А. Н. Робакидзе. 1967, Основы типологии и картографирования жилища народов Кавказа (материалы к кавказскому историко-этнографическому атласу). – СЭ, № 2. с. 26–44.

Лисициан С. 1925, К изучению армянских крестьянских жилищ (карабахский карадам).– «Известия кавказского историко-археологического института» (ИКИАИ) (Тифлис), т. III, с. 97–108.

Лисициан С. 1927, Из материалов по изучению жилищ Армении. Крестьянское жилище Мегринского района. – ИКИАИ, т. V, с.119–133.

Лисициан С. 1955, Очерки этнографии дореволюционной Армении.– «Кавказский этнографический сборник» (М.), № 1 (новая серия), т. XXVI, с. 182–264.

Лисициан С. 1927, Из материалов по изучению жилищ Армении. «Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов– Тамбовского и Даралагязского». – ИКИАИ, т. VI, с.133–140.

Лисициан С. 1926, Крестьянское жилище Высокой Армении. – ИКИАИ, т. IV, с. 55–70.

Марутян А. 1989, Интерьер армянского народного жилища (вторая половина XIX – начало XX в.).**–** АЭФ, вып. 17, с. 63–142.

Марутян А. 1990, Город Ахалцха. Вопросы этнической истории и традиционного жилища.– «Вестник общественных наук» АН АрмССР, № 6, с. 19–33.

Марутян А. 2012, Поселения и жилища.– Армяне. Серия «Народы и культуры». М., «Наука», с. 205–232.

Мкртумян Ю. И. 1983, Сельское жилище армян.– Культура жизнеобеспечения и этнос. Ереван, Изд. АН АрмССР, с. 150–188.

Мкртумян Ю. И. 1974, Формы скотоводства в Восточной Армении.– АЭФ, вып. 6, с. 7–90.

Народы Кавказа. 1962, т. II. М., Изд. АН СССР, 967 с.

Պատմության հարցեր 2021 № 3 Историко-филологический журнал

Орбели И. А. 2002, Избранные труды в двух томах, т. II. Ереван, «Зангак», 208 с.

Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, 1836, т. 4, СПб., 401 с.

Пантюхов И. 1896, О пещерных и позднейших жилищах на Кавказе. Тифлис, Тип. М. Д. Ротинианца, 142 с.

Петрушевский И. 1930, О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха, т. 1, вып. 5. Баку, Изд. АзГНИИ, 43 с.

Пиотровский Б. Б. 1950, Кармир-блур. Ереван, Изд. АН АрмССР, 100 с.

Тер-Мартиросов Ф. И. 1975, Античные печи из раскопок Арташата. – «Вестник общественных наук» АН АрмССР, № 7, с. 70–84.

Чиковани Т. А. 1971, Классификация и генезис закавказского жилища со ступенчато-венцеобразным перекрытием.– Хозяйство и материальная культура народов Кавказа XIX – XX вв., вып. 1. М., «Наука», с. 33–37.

Чиковани Т. А. 1964, Опыт сравнительного изучения жилищ типа «дарбази».–VII Международный конгресс антропологических и этнографических наук. М.

Шагинян М. 1926, Армянская деревня. – «Известия» ЦИК СССР (М.), № 161, 162.

Якобсон А. 1950, Очерк истории зодчества Армении в V–XVIII в. М.–Л., Гос. Изд. архитектуры и градостроительства, 163 с.

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ АРМЯНСКИХ НАРОДНЫХ ТРАДИЦИОННЫХ ЖИЛИЩНЫХ КОМПЛЕКСОВ (XIX век – начало XX века)

РАФИК НААПЕТЯН

Р е з ю м е

Ключевые слова: Западная Армения, Восточная Армения, ода, азарашен, землянка, план.

Исследование исторических данных и имеющихся под рукой полевых этнографических материалов показывает, что в двух частях исторической Армении изначально до конца XIX в. и начала XX в. наиболее широко распространенным типом жилищного комплекса является головной дом. Это обстоятельство свидетельствует об однородности армянского населения с незапамятных времен. Данная форма жилища была также распространена в соседних с Арменией странах, в которых армянское население было многочисленным.

Большое разнообразие природно-климатических и географических условий исторической Армении, характер экономических занятий, возможности пахотных земель и строительного материала, национальный мен-

талитет и многовековые традиции, военно-политическое положение страны, степень социального расслоения общества, контакты с соседними странами оказали влияние на местоположение, размеры армянского народного жилищного комплекса, соотношение составляющих элементов, структурную композицию и формирование особенностей организации интерьера.

В частности, в связи с многовековой традицией жить большими родовыми семьями, головные дома строились с внушительными площадями, поскольку они были многофункциональными. Особенно в Западной Армении необеспеченность жизни и постоянные грабежи заставляли людей жить сплоченно. Головной дом включал в себя спальню семейства, кухню, столовую, мастерскую, беседку и служил местом для проведения семейных и общинных торжеств, духовных церемоний.

Рафик Наапетян – д. и. н., проф. кафедры археологии и этнографии исторического факультета ЕГУ. Научные интересы: армянская этнография, история армянской этнографии. Автор 9 монографий, 4 учебных пособий и 180 статей. rafiknahapetyan@mail.ru

ON SOME FEATURES OF THE ARMENIAN PEOPLE'S HOUSING COMPLEXES (the 19th – the early 20th)

RAFIK NAHAPETYAN

S u m m a r y

Key words: Western Armenia, Eastern Armenia, oda (head house), hazarashen, dugout, plan.

In the article, the author, on the basis of historical materials and materials of field ethnographic research at hand, shows that in two parts of historical Armenia, initially before the end of the 19th century. and the beginning of the 20th century. the most widespread type of housing complex is the head house. This circumstance testifies to the homogeneity of the Armenian population since time immemorial. This form of dwelling was also widespread in the neighboring countries of Armenia, in which there was a large number of the Armenian population.

The extreme diversity of the climatic and geographical conditions of historical Armenia, the nature of economic activities, the possibilities of arable land and building materials, the national mentality and centuries-old traditions, the military-political situation of the country, the degree of social stratification of society, contacts with neighboring countries influenced the terrain, the size of the Armenian folk housing complex, the ratio of the constituent elements, the

Պատմաբանասիրական հանդես 2021 № 3 Историко-филологический журнал

structural composition and the formation of the peculiarities of the organization of the interior.

In particular, due to the centuries-old tradition of living in large clan families, the head houses were built with large areas, since they were multifunctional. Especially in Western Armenia, insecurity and constant robbery made people live together. The main house included the family's bedroom, kitchen, dining room, workshop, gazebo and was a place for family and community celebrations and spiritual ceremonies.

Rafik Nahapetyan – Doctor of Sciences in History, Professor at the YSU Department of Archaeology and Ethnography of the Faculty of History. Scientific interests: Armenian ethnography, history of Armenian ethnography. Author of 9 monographs, 4 textbooks and 180 articles.
rafiknahapetyan@mail.ru